ԺԱ

ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՔ ՀԱՅՈՑ · — ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ·

Սրբոյն Սարգսի նուիրուած եկեղեցին, Կաֆայի ազգայնոց հին և նոր եկեղեցեաց մէջ հնագոյնն է, քաղաքին կենդրոն տեղին շինուած, և շատ ձեռագրաց մէջ, ինչպէս հիմայ ալ յիշատակեցինք, նշանակուած է իբր աթոռական կամ մայր եկեղեցի. ունի ընդարձակ բակ չորս կողմը, որոյ մի անկիւնը քաշուած է եկեղեցին, յոյժ համեստ ձևով. և որովհետև քաղաքին հրապարակին արևմտեան հարաւային կողմը կ'իյնայ, այն պատճառաւ կարծես խռոված, և կռնակ դարձուցած է դէպ ի քաղաք։ Այդ բակին մէջ, ուր այժմ կայ տղայոց և աղջկանց համար ազգային ծխական ուսումնարան, հին ատեն, ըստ ազգիս սովորութեան, վանք և բնակութիւն եղած է արեղայից և վարդապետաց, ուր շատ արեղայք բազում ձեռագրեր օրինակել են՝ ընդ հովանեաւ Ս· Սարգիս տաճարին։

Եկեղեցւոյն դիրքը և տեղը, հանդերձ ընդարձակ բակով, քաղաքին մէջ տեղ շինուած, յայտնի ապացոյց են որ այս եկեղեցիս Գենուացւոց ի Թէոդոսիա գալէն առաջ շինուած է· վասն զի ԺԴ դարու հայ բազմաթիւ գաղթականութեան՝ Գենուացիք նշանակած են առանձին թաղ Հայոց, այժմեան արգելանոցին տեղը և անտի դէպ ի հարաւակողմեան սարերը, ուր և Հայք նոր պատքաշելով իրենց բնակութեան չորս կողմը, ապահովել են զիրենք ընդդէմ թշնամեաց յարձակման.